ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե 40/6-7309
«28» 12 2018 թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝(+374 10) 44-34-80
Հեռ.՝(+374 10) 44-29-04
Հեռ.՝(+374 60) 37-77-37
Հեռ.՝(+374 60) 37-26-56

«ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 24.05.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1 պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) նախատեսված ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը (հիմք՝ 31.08.2018թ. կնքված համաձայնագիր N1): Հաշվի առնելով վերը նշված աշխատանքների կատարման կարևորությունը, «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին տրվել էր հնարավորություն Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո շարունակել շինարարական աշխատանքների կատարումը մինչև 2018թ. տարեվերջ, սակայն Կապալառուից պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը: Քանի որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն մինչև տարեվերջ չի ավարտել Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները՝ 33000000 (երեսուներեք միլիոն) ՀՀ դրամի փոխարեն, 27.12.2018թ. դրությամբ, կատարել է 19564440 (տասնինը միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամի աշխատանքներ, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը և 3.1.4 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. դեկտեմբերի 27-ին միակողմանի մասնակի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 13435560 (տասներեք միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով, որից հետո N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՇՁԲ-18/1 պայմանագրի

ընդհանուր գումարը կազմում է 19564440 (տասնինը միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 584447 (հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն (Պայմանագրի չկատարված գումարի նկատմամբ):

Միաժամանակ, հիմք ընդունելով Ձեր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (պայմանագրի կատարման ապահովում) 1.3 կետը, տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 3300000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման գումար (10%):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատարող՝
Ա.Ասատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ԿԱ բաժին
Հեռ.՝ 060-37-29--04